## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավետ համայնք, (0235)63355, (0235)63311, mrgavet0@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

**30 նոյեմբերի 2016թվականի N 25**

### ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 9-ՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով

Հաստատել Մրգավետ համայնքի թիվ 9-րդ նիստի հետևյալ օրակարգը

1.Մրգավետ համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը, գյուղապետարանի, մշակույթի տան, գրադարանի և մանկապարտեզի աշխատակազմի թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնական դրույքաչափի հաստատման մասին

զեկ. Լ. Աբրահամյան

2.Մրգավետ համայնքի 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման մասին

զեկ. Լ. Աբրահամյան

3.2016թվականի Մրգավետ համայնքի վարչական բյուջեի եկամտային և ծախսային մասում փոփոխություններ կատարելու մասին

զեկ. Լ. Աբրահամյան

4.Մրգավետ համայնքի մանկապարտեզի աշխատանքները դադարեցնելու մասին

զեկ. Լ. Աբրահամյան

5. Ավտոմեքենաների գույքահարկի արտոնություններ տալու մասին

զեկ. Լ. Աբրահամյան

6. Մրգավետ համայնքի մանկապարտեզի 2017թվականի վարձավճարների /ծնողական գումարների/ չափերի հաստատման մասին

զեկ. Լ. Աբրահամյան

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

2. ԱՐՇԱԿՅԱՆ ԱՐԱՄ

3. ԲԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱԿ

5. ԴԱԽՉՅԱՆ ՑՈԼԱԿ

6. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՄԵՑՐԱՆ

7.ԱՐՇԱԿՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավետ համայնք, Հեռ. (0235)63355, mrgavet0@mail.ru

### Ո Ր Ո Շ Ու Մ

30 նոյեմբերի 2016թվականի 26-Ն

ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետի պահանջներով, <<Իրավական ակտերի մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի դրույթներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Մրգավետ համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը, գյուղապետարանի, մշակույթի տան, գրադարանի և մանկապարտեզի աշխատակազմի թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնական դրույքաչափերը համաձայն հավելվածի

2.Ուժը կորցրած ճանաչել Մրգավետ համայնքի ավագանու 19.01.2016թվականի << Մրգավետ համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը, գյուղապետարանի, մշակույթի տան, գրադարանի և մանկապարտեզի աշխատակազմի թվաքանակը և հաստիքացուցակների պաշտոնական դրույքաչափերի հաստատման մասին>> թիվ 04-Ն որոշումը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ
2. ԱՐՇԱԿՅԱՆ ԱՐԱՄ
3. ԲԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱԿ
5. ԴԱՆՈՅԱՆ ՑՈՂԱԿ
6. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՄԵՍՐՈՊ
7. ԱՐՇԱԿՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված
Մրգավետ համայնքի ավագանու
2016 թվականի նոյեմբերի 30-ի
թիվ 26-Ն

## ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՊԱՐԱՏ

| | | |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | | 270000 դրամ |
| 1. Աշխատակազմի քարտուղար | 1 | 160500 դրամ |
| 2. Գլխավոր մասնագետ | 1 | 160000դրամ |
| 3. Առաջատար մասնագետ | 1 | 125000 դրամ |
| 4 Համակարգչային օպերատոր | 1 | 125000 դրամ |
| 5. Գործավար | 1 | 100000դրամ |
| 6. Հավաքարար | 1 | 79100 դրամ |

## ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ

| | | |
|---|---|---|
| 1. Տնօրեն | 1 | 79100 դրամ |
| 2. Հավաքարար | 1 | 73800 դրամ |
| 3.Պահակ | 1 | 73800 դրամ |

## ԳՐԱԴԱՐԱՆ

| | | |
|---|---|---|
| 1. Գրադարանավարուհի | 1 | 97000 դրամ |

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

| | | |
|---|---|---|
| 1. Տնօրեն | 1 | 159000 դրամ |
| 2. Հաշվապահ | 0,5 | 73800 դրամ |
| 3. Դաստիարակ հոգեբան | 1 | 95000 դրամ |
| 4. Բուժքույր | 0,5 | 79100 դրամ |
| 5. Դաստիարակ | 0,5 | 73800 դրամ |
| 6. Դաստիարակ | 0,5 | 73800դրամ |
| 7. Դաստիարակ | 0,5 | 73800դրամ |
| 8. Դաստիարակ | 0,5 | 79100րամ |
| 9. Լրացուցիչ կրթական ծառայության մանկավարժ | 0,5 | 79100 դրամ |
| 10. Երաժշտության դաստիարակ | 0,5 | 73800 դրամ |
| 11. Գործավար | 0,5 | 79100 դրամ |
| 12. Խոհարար | 1 | 74500 դրամ |
| 13. Օժանդակ բանվոր | 0,5 | 73800 դրամ |
| 14. Դաստիարակի օգնական | 1 | 80000 դրամ |
| 15. Դաստիարակի օգնական | 1 | 80000 դրամ |
| 16. Ֆիզիկական կուլտուրայի հրահանգիչ | 0,5 | 79100 դրամ |
| 17. Գիշերային պահակ | 1 | 79100 դրամ |
| 18. Դռնապան | 0,5 | 73800դրամ |

Աշխատակազմի քարտուղար՝ Ն. Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավետ համայնք 22, Արարատի մարզ, գ.Մրգավետ,

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 նոյեմբերի 2016թվականի N 27-Ն

## ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Մրգավետ համայնքի 2017 թվականի տեղական տուրքերի և վճարներների դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Կողմ -7

Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ
2. ԱՐՇԱԿՅԱՆ ԱՐԱՄ
3. ԲԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱԿ
5. ԴԱԽՉՅԱՆ ՑՈԼԱԿ
6. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՄԵՑՐԱՆ
7. ԱՐՇԱԿՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված
Մրգավետ համայնքի ավագանու
2016 թվականի նոյեմբերի 30-ի
թիվ 27-Ն որոշման

## ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ,

բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50 000 դրամ,

բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100 000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամշենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:

1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկվում են 0.5 գործակցի կիրառմամբ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10.000 դրամ,
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10.000 դրամ,
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15.000 դրամ,
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20.000 դրամ,
ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4.0000 դրամ,
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 95.000 դրամ:
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10.000 դրամ,
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10.000 դրամ,
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15.000 դրամ,
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20.000 դրամ,
ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 40.000դրամ,
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 95.000դրամ:
5. Համայնքի տարածքում՝
ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.
բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 200 000 դրամ.
գ) խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30 000 դրամ.
գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
հիմնական շինությունների ներսում՝
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝5000 դրամ,
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝10.000 դրամ,
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15.000դրամ,
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20.000դրամ,
ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 30.000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 50.000դրամ,

ոչ հիմնական շինություններում ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝15.000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25.000 դրամ:

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 25 000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000դրամ:

7. Համաքաղաքային կանոններին համապատասխան քաղաքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 0 դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000-2000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 500դրամ.

ե) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:

8.1. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով:

8.2. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է1 000 դրամ:

Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50 000 դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10 000 դրամ:

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Բնակչի պահանջով սեփականշնորհված և տնամերձ հողերը չափելու համար,որպես վարձավճարի չափ սահմանել՝ 1000 դրամ

Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար՝ 500 դրամ:

Աղբահանության տեղական վճար՝ 0 դրամ

Աշխատակազմի քարտուղար՝ Ն. Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավետ համայնք հեռ. (0235)63355, (0235)63311, mrgavet0@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 նոյեմբերի 2016թվականի N 28-Ն

## ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 3-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

2016թվականի համայնքի վարչական բյուջեի եկամտային մասում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1. Համայնքի վարչական բյուջեի եկամտային մասից.

ա/ հողի հարկի տարեկան նախատեսված 5300000 /հինգ միլիոն երեք հարյուր հազար / դրամից պակասեցնել 500000 /հինգ հարյուր հազար / դրամ

բ/ ավտո գույքահարկի տարեկան նախատեսված 4600000 /չորս միլիոն վեց հարյուր հազար / դրամից պակասեցնել 600000 /վեց հարյուր հազար / դրամ

2016թվականի համայնքի բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները

1. Վարչական բյուջեի 11.01.02.51 /պահուստայինն միջոցներ/ 4891 / պահուստայինն միջոցներ/ հոդվածի 672900/վեց հարյուր յոթանասուներկու հազար ինը հարյուր/ դրամը հանել:

2. Վարչական բյուջեի 01.06.01.60 /գյուղ.իրավ.տեղ.տրամադրում/ տարեկան նախատեսված 4241 /մասնագիտական ծառայություն/հոդվածից 50000/հիսուն հազար/ դրամը հանել:

բ/4819 /նվիրատվություն/ հոդվածով տարեկան նախատեսված 100000 /մեկ հարյուր / հազար դրամը հանել :

3. Վարչական բյուջեի 10.07.01.54. /սոց. անապ. անձ. աջ. / գործառնական դասակարգման տարեկան նախատեսված

ա/ 4726/թաղման ծախսեր / հոդվածի 200000/երկու հարյուր հազար /դրամից 100000 /մեկ հարյուր հազար /դրամ հանել:

բ/ 4729/այլ նպաստներ/ հոդվածից տարեկան նախատեսված 2750000/երկու միլիոն յոթ հարյուր հիսուն հազար / դրամից հանել 177100 /մեկ հարյուր յոթանասունյոթ հազար մեկ հարյուր / դրամ:

4 . ա/ Վարչական բյուջեի 01.01.01.51 /կառավարման մարմնի պահպանում/ 4221 / գործուղում / հոդվածից 20000 /քսան հազար/ դրամ տեղափոխել նույն գործառնական դասակարգման 4111- /աշխատավարձ/ հոդվածին :

բ/ 4234 / տեղեկատվական ծառայություն/ հոդվածից տարեկան նախատեսված 54000/հիսունչորս հազար/ դրամը տեղափոխել նույն գործառնական դասակարգման 4261- /գրասենյակային նյութեր / հոդվածին:

գ/ 4251 / ընթացիկ նորոգում պահպանում/ հոդվածից տարեկան նախատեսված 100000 /մեկ հարյուր հազար/ դրամը տեղափոխել 4111- /աշխատավարձ/ հոդվածին:

դ/ 4252 /մեք.ընթ.նորոգում/ տարեկան նախատեսված 57000/հիսունյոթ հազար / դրամը տեղափոխել նույն գործառնական դասակարգման 4111- /աշխատավարձ/ հոդվածին :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ
2. ԱՐՇԱԿՅԱՆ ԱՐԱՄ
3. ԲԱՐՈՒԽՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱԿ
5. ԴԱՆՉՅԱՆ ՑՈԼԱԿ
6. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՄԵՍՐՈՊ
7. ԱՐՇԱԿՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

Համայնքի ղեկավար՝ Լ. Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավետ համայնք (0235)63355, mrgavet0@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 նոյեմբերի 2016թվականի N 29

## ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մրգավետ համայնքի մանկապարտեզը չի ջեռուցվում, ուստի ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 14-րդ կետով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Սույն թվականի դեկտեմբերի 10-ից ժամանակավորապես դադարեցնել Մրգավետ համայնքի մանկապարտեզի աշխատանքները:

Կողմ -7 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ
2. ԱՐՇԱԿՅԱՆ ԱՐԱՄ
3. ԲԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱԿ
5. ԴԱՆՁՅԱՆ ՑՈՂԱԿ
6. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՄԵՍՐՈՊ
7. ԱՐՇԱԿՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավետ համայնք (0235)63355, mrgavet0@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 նոյեմբերի 2016թվականի N 30

## ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15 հոդվածի 3 կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ավտոմեքենաների գույքահարկի արտոնություններ տալ համայնքի հետևյալ բնակիչներին.

| | | |
|---|---|---|
| 1Թադևոսյան Արտակ | գազ -3302 | 7400 դրամ |
| 2.Թովմասյան Հովհաննես | գազ -311000 | 10000 դրամ |
| 3.Բաղալյան Կարապետ | վազ-21063 | 16000դրամ |
| 4.Ենգիբարյան Նիկոլայ | վազ-2102 | 6400դրամ |
| 5.Սարգսյան Սարգիս | վազ-21099 | 12000դրամ |
| 6.Բաբայան Ավետա | վազ-21074 | 8000դրամ |
| 7.Կարապետյան Ժորժիկ | վազ-2106 | 8000դրամ |
| 8.Գալստյան Մարիամ | վազ-2107 | 7700դրամ |
| 9. Բունիաթյան Արտակ | վազ-21061 | 7700դրամ |
| 10.Ամիրջանյան Ռուբեն | վազ-21074-120-21 | 5400դրամ |
| 11.Նշանյան Պարգև | վազ-21061 | 7700դրամ |
| 12.Բաղալյան Նորայր | վազ-21063 | 6900դրամ |

Կողմ -7 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ
2. ԱՐՇԱԿՅԱՆ ԱՐԱՄ
3. ԲԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱԿ
5. ԴԱԽՉՅԱՆ ԾՈԼԱԿ
6. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՄԵՅՐԱՆ
7. ԱՐՇԱԿՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավետ համայնք հեռ. (0235)63355, (0235)63311, mrgavet0@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

30 նոյեմբերի 2016թվականի N 31

## ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ /ԾՆՈՂԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ/ ՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Մրգավետ համայնքի մանկապարտեզի 2017 թվականի ծնողական գումար սահմանել 5000 (հինգ հազար) դրամ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ
2. ԱՐՇԱԿՅԱՆ ԱՐԱՄ
3. ԲԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱԿ
5. ԴԱԽՉՅԱՆ ԾՈՂԱԿ
6. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՄԵՀՐԱՆ
7. ԱՐՇԱԿՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ